ք.Երևան «23» մարտի 2022թ.

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏՎՃԱՐԻ ԱԿՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ «Mary Parfum», «Time», «Pandora», «O Bag», «Note Mote», «Սիրուն Անկյուն» (հայերեն տարադարձությամբ՝ «Մերի պարֆում», «Թայմ», «Պանդորա», «Օ Բեգ», «Նոթ Մոթ») ապրանքային նշաններով գործող խանութ-սրահներում «Easy Wallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի միջոցով վճարում կատարելու դեպքում վճարում կատարող հաշվառման հաշվի օգտատիրոջը հաշվեգրել հետվճարի գումար՝ հետևյալ չափերով՝

«Mary Parfum» («Մերի պարֆում»)– 5%

«Time» («Թայմ») – 5%

«Pandora» («Պանդորա») – 5%

«O Bag» («Օ Բեգ») – 5%

«Note Mote» («Նոթ Մոթ») - 10%

«Սիրուն Անկյուն» – 10%

2. Սույն հրամանի 1-ին կետի ապահովման համար սույն հրամանի հավելվածով հաստատել հրապարակային օֆերտան:

3. Սույն հրամանը գործում է գործում է մինչև դրանով սահմանված գործընթացների ամբողջական կատարումը:

Տնօրեն _____ Մ.Գաբրիելյան

Կ.S.

Հավելված

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 23-ի թիվ 2022/010 հրամանի

ՀԵՏՎՃԱՐԻ ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1.1. Սույն կանոններով կարգավորվող ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից կազմակերպվող **«Easy Wallet»** էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ ԷՎՀ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի կողմից ԷՎՀ-ով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել **«Easy Wallet»** ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:

1.2. Սույն կանոններով սահմանվում են **«Easy Wallet»** ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտ կցելու միջոցով նույնականացված, էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի կողմից «Mary Parfum», «Time», «Pandora», «O Bag», «Note Mote», «Սիրուն Անկյուն» (հայերեն տարադարձությամբ՝ «Մերի պարֆում», «Թայմ», «Պանդորա», «Օ Բեգ», «Նոթ Մոթ») ապրանքային նշաններով գործող առևտրի բոլոր կետերում ԷՎՀ-ով վճարումներ կատարելու դեպքում հետվճար ստանալու կարգը և պայմանները:

1.3. Ակցիայի շրջանակներում **«Easy Wallet»** էլեկտրոնային դրամապանակը ներբեռնած, գործարկած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտի միջոցով նույնականացված, ցանկացած օգտատեր 2022 թվականի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ «Mary Parfum», «Time», «Pandora», «O Bag», «Note Mote», «Սիրուն Անկյուն» (հայերեն տարադարձությամբ՝ «Մերի պարֆում», «Թայմ», «Պանդորա», «Օ Բեգ», «Նոթ Մոթ») ապրանքային նշաններով գործող առևտրի բոլոր կետերում ԷՎՀ-ի միջոցով վճարում կատարելու դեպքում կստանա հետվճարային միավորներ:

1.4. Սույն պայմաններով և կանոններով սահմանված հետվճարային միավորները հաշվարկվում են 1 միավոր = 1 ՀՀ դրամ սկզբունքով: Սույն կանոնների 1.3 կետում նշված ժամկետում և առևտրի կետում ԷՎՀ-ով կատարված յուրաքանչյուր վճարման դիմաց հաշվեգրվող հետվճարի գումարը կազմում է՝

«Mary Parfum» («Մերի պարֆում»)– 5%
«Time» («Թայմ») – 5%
«Pandora» («Պանդորա») – 5%
«O Bag» («Օ Բեգ») – 5%
«Note Mote» («Նոթ Մոթ») - 10%
«Սիրուն Անկյուն» – 10%

1.5. Սույն պայմանների և կանոնների 1.4 կետով սահմանված հետվճարային միավորները հաշվեգրվում է վճարումը կատարող օգտատիրոջ հաշվառման հաշվին՝ առցանց, սակայն ոչ ուշ տվյալ վճարումը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 23:59:59:

1.6. Սույն կանոնների 1.4 կետում նշված հետվճարը մուտքագրվում է օգտատիրոջ էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվում վարվող առանձին՝ «Easy Coins» վերնագրված ենթաբաժնում, որտեղից կարող է օգտատիրոջ հայեցողությամբ փոխանցվել հաշվառման հաշվին հասանելի դրական մնացորդին՝ ԷՎՀ-ի կանոնների համաձայն:

1.7. Սույն կանոններով սահմանված հետվճարին վերաբերող գնման գործարքների չեղարկման դեպքում վճարումը կատարած ԷՎՀ-ի օգտատիրոջ հաշվառման հաշվին հաշվեգրվում է գործարքի վճարման գումարի և հետվճարի գումարի դրական տարբերության չափով մասը:

1.8. Ակցիային կարող են մասնակցել **«Easy Wallet»** ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած, նույնականացված ցանկացած օգտատեր:

1.9. Ակցիայի շրջանակներում ստացած միավորները վավեր են նաև Ակցիայի ավարտից հետո:

1.10. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Ընկերության կողմից՝ խմբագրված տարբերակը www.easypay.am կայքում հրապարակելու միջոցով:

1.11. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:

1.12. Սույն կանոնները և Ակցիան գործում են սույն կանոնների 1.3 կետում նշված վերջնաժամկետի և սույն կանոնների 1.5 կետով սահմանված հաշվեգրման առավելագույն ժամկետների հաշվարկով: